

## ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2019 թվականի ընթացքում կատարված հիմնական աշխատանքները և ձեռքբերումները

Տարեվերջյան մամուլի ասուլիսին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Գարեգին Բաղրամյանը ներկայացրեց 2019 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից կատարված հիմնական աշխատանքները և ձեռքբերումները:

2019 թվականին արձանագրված առավել ընդգծելի ձեռքբերումները՝

- 2019 թվականի սեպտեմբերի 10-ից հանձնաժողովի նախաձեռնությամբ սկսել էր էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վերանայման գործընթացը, որի արդյունքում Հանձնաժողովի դեկտեմբերի 25-ի նիստով արտադրող խոշոր կայանների և համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների համար հաստատված սակագներով հնարավոր եղավ վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները պահպանել նույնը և չվերանայել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները:

*Հարկ է նշել, որ սակագների վերանայումը պայմանավորված էր 2020թ. փետրվարի 1-ից մինչև 2021թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար կանխատեսվող էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության, ներկրման և արտահանման հաշվեկշռի փոփոխությամբ, 2018-2019թթ. թվականին իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման անհրաժեշտությամբ և էլեկտրաէներգետիկական համակարգում գործող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վրա ազդող մի շարք այլ գործոնների փոփոխություններով:*

- 
- Իրականացված աշխատանքներից առանձնացվեց նաև առաջին անգամ կարգավորվող անձի կողմից իրականացվող ներդրումների ուսումնասիրության աշխատանքներին **Հանձնաժողովի նախաձեռնությամբ** անկախ ատղիտորական կազմակերպության ներգրավումը: Մրցութային եղանակով ընտրված ատղիտորի կողմից, **համաձայն հանձնաժողովի հետ համաձայնեցված տեխնիկական առաջադրանքի**, կատարվել է

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության իրականացված ներդրումային ծրագրերի և դրանց շրջանակում կատարված գնումների տեխնիկական աուդիտ: Աուդիտի նպատակն էր ապագա սակագներում ներդրումների ներառման կամ մերժման նպատակով ստանալ անկախ մասնագիտական կազմակերպության օբյեկտիվ և հիմնավոր գնահատականներ, կիրառել ներդրումների հավաստիության և հիմնավորվածության ստուգման առավել թիրախային մեթոդներ և գործիքներ: Միննույն ժամանակ սա հնարավորություն էր գնահատել նաև մեր մոտեցումների արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում վերանայել դրանք:

Արդեն իսկ Հանձնաժողովը ստացել է Աուդիտի հաշվետվությունը և հայտնաբերված անարդյունավետ ծախսերը նվազեցվել են սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից: Հաշվետվության արդյունքում նաև ընկերությանը կտրվեն համապատասխան հանձնարարականներ հետագայում նման անարդյունավետ ծախսերը բացառելու նպատակով:

Նախատեսվում է նմանօրինակ աշխատանքերը դարձնել պարբերական և կիրառել նաև մյուս կազմակերպությունների ներդրումների գնահատման ընթացքում:

- 
- Վերականգնվող էներգետիկայի մասով, ինչպես գիտեք, վերջին շրջանում հանրապետությունում մեծ թափ է ստացել արևային կայաններում էլեկտրական էներգիայի արտադրությունը, որին մեծապես նպաստեց հանձնաժողովի և կառավարության նախաձեռնած լիցենզավորման և սակագնային կարգավորման գործընթացը: Հաշվի առնելով, որ 2019 թվականի տարեկեսին արդեն իսկ լրացավ 2018-2019 թվականների համար նշված կայանների մասով սահմանված 100 ՄՎտ հզորության սահմանաչափը, ինչը մասնավոր ներդրողների կողմից հիմնավոր ազդակ էր այդ ուղղությամբ հետագա քայլեր ձեռնարկելու համար, Հանձնաժողովը կառավարության հետ համատեղ 2019-2020 թվականների համար սահմանեց ևս 100 ՄՎտ հզորության սահմանաչափ՝ մինչև 5ՄՎտ հզորությամբ արևային կայանների կառուցման համար:

Արդյունքում, հանձնաժողովի կողմից 2019 թվականին արևային կայանների կառուցման համար տրամադրվել է թվով 24 լիցենզիա՝ ընդհանուր 86 ՄՎտ հզորությամբ կայանների համար, 3 կայաններ էլ անցել են շահագործման փուլ՝ ընդհանուր 3 ՄՎտ հզորությամբ:

Տարեվերջի արդյունքներով էներգահամակարգում արևային ռեսուրսի կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայանների ընդհանուր հզորությունը կազմում է ավելի քան 210 ՄՎտ, որից շահագործման փուլում գտնվում են թվով 12 կայաններ՝ 10 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, ինչպես նաև ՀԷՑ-ի հետ սեփական կարիքների բավարարման համար փոխհոսք կատարող շուրջ 1900 ինքնավար կայաններ՝ ավելի քան 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ:

---

- Հանձնաժողովի դեկտեմբերի 25-ի նիստով հաստատվեցին էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմանն ուղղված մեծածավալ իրավական ակտեր, այդ թվում՝ մեծածախ և մանրածախ շուկաների առևտրային կանոնները, մեծածախ և մանրածախ շուկաների ցանցային կանոնները, պայմանագրերի օրինակելի ձևերը, էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշները: Նշված բարեփոխումները բխում են 2018 թվականի տարեկեսից ուժի մեջ մտած «էներգետիկայի մասին» օրենքում կատարված փոփոխություններից և ուղղված են մեծածախ շուկայի չկարգավորվող հատվածում մրցակցային մեխանիզմների ներդրմանը, շուկա նոր մասնակիցների անխոչընդոտ մուտքի ապահովմանը, տարածաշրջանային առևտրի խթանմանը, այդ թվում՝ լիցենզավորման ազատականացման արդյունքում առավել էժան էլեկտրական էներգիայի ներկրման հնարավորությունների ստեղծմանը, սպառողներին էլեկտրական էներգիայի բաշխման և մատակարարման գործառնությունների հստակ տարանջատմանն ուղղված կարգավորումների ամրագրմամբ մանրածախ հատվածում ևս մրցակցային տարրերի ներդրմանը և այլն:

Այդ գործընթացի շրջանակում, հաշվի առնելով երկրի էլեկտրաէներգետիկական համակարգի առանձնահատկությունները, հանձնաժողովի կողմից իրավասու մարմնի հետ համատեղ ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ 2021 թվականի տարեսկզբից կներդրվի էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդել՝ համապատասխան ծրագրային ապահովմամբ, որի հիմքում կդրվի միջազգային առաջավոր փորձը, ներքին շուկայի սպառողների պաշտպանությունը, արտադրության և սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների կիրառումը և այլ հիմնարար սկզբունքներ:

---

➤ Ինչպես գիտեք, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայի պայմանների համաձայն՝ վարձակալության 2-րդ պայմանագրային տարվանից սկսած խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման բազիսային սակագները յուրաքանչյուր տարի պետք է ճշգրտվեն՝ հաշվի առնելու համար մանրածախ ջրամատակարարման ծավալների փոփոխությունը, աղաճը և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունը: Ընդ որում, աղաճով ճշգրտվում է սակագնի 60%-ը, էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությամբ՝ 13%-ը և ճշգրտման չի ենթարկվում սակագնի 27%-ը:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն 2019 թվականին ևս դիմեց Հանձնաժողով՝ վարձակալության 4-րդ պայմանագրային տարվա (2020 թվական) համար սակագների ճշգրտման հայտով: Մասնավորապես, ընկերությունն առաջարկեց խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման մանրածախ սակագների գումարային մեծությունը սահմանել 181,807 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ-ն)՝ հանձնաժողովի որոշմամբ հաստատված 191.414 դրամ/խմ-ի (ներառյալ ՀՀ կառավարության 11,414 դրամ/խմ սուբսիդիայի գումարը), բաժանորդների համար փաստացի գործող 180,0 դրամ/խմ-ի և բազիսային 176,4 դրամ/խմ-ի դիմաց:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սակագների վերանայման հայտի ուսումնասիրության շրջանակում սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների ճշգրտման նպատակով հանձնաժողովը և ջրային կոմիտեն, ընկերության հետ ձեռքբերված փոխադարձ համաձայնությամբ, սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ համատեղ 2019թ. սեպտեմբերի 18-ից մինչև նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացրեց մոնիթորինգ՝ երկու փուլով (Երևան քաղաքի և մարզերի սպասարկման տարածքներում):

Ամփոփելով մոնիթորինգի արդյունքերը (2020 թվականի համար մանրածախ ծառայությունների գումարային սակագինը հաշվարկվել է 180,174 դրամ/խմ), ինչպես նաև հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ԼՁ №0001 լիցենզիայի պայմաններով նախատեսված համապատասխան կարգավորումը, *(եթե որևէ տարվա համար հաշվարկված Մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի և բաժանորդների համար փաստացի գործող գումարային գնի տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա տվյալ տարվա համար հաստատվում են Ծառայությունների*

մատուցման՝ բաժանորդների համար փաստացի գործող գներին հավասար սակագները՝ հանձնաժողովի կողմից սահմանվեցին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագները՝ պահպանելով վերջիններիս համար փաստացի գործող գները:

-----

➤ Հանձնաժողովի 2019 թվականին համապատասխան անհատական որոշումներով համաձայնություն է տրվել 53 համայնքներում Ասիական զարգացման ու վերակառուցման, զարգացման եվրոպական բանկերի ֆինանսավորմամբ և համայնքների բյուջեների և պետական ծրագրերի միջոցներով կառուցված նոր համակարգերը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացումն իրականացնել պարզեցված ընթացակարգով: Հաշվի առնելով նմանատիպ դեպքերի նորմատիվ իրավական կարգավորման անհրաժեշտությունը հանձնաժողովը համապատասխան փոփոխություններ կատարեց նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններում:

➤ 2019 թվականի տարեկեսին Արցախի Հանրապետությունում ՀՀ և ԱՀ շահագրգիռ պետական մարմինների և շարժական կապի օպերատորների մասնակցությամբ անցկացված համատեղ քննարկումների արդյունքում՝ ԱՀ և ՀՀ կապի օպերատորների միջև գործող ռուսմինգ ծառայության սակագները նվազեցվեցին, մասնավորապես՝ 2019 թվականի օգոստոսի 1-ից ԱՀ-ում «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի և «Յուրքոմ» ՍՊԸ-ի ելքային և մուտքային զանգերի համար գործող 45 դրամ/րոպե սակագինը հավասարեցվեց «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից կիրառվող հետևյալ սակագներին՝ 38 դրամ/րոպե ելքային զանգերի համար, 25 դրամ/րոպե մուտքային զանգերի համար, իսկ sms կարճ հաղորդագրությունների համար գործող 60 դրամ սակագինը փոխարինվեց 40 դրամ սակագնով:

Այնուհետև սույն թվականի սեպտեմբերի 6-ին ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական

հանձնաժողովի և «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան», «Ղարաբաղ Տելեկոմ» փակ բաժնետիրական ու «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև ռոումինգի ծառայությունների և փոխկապակցման վճարների սակագների վերաբերյալ: Հուշագրով նախատեսվեց 2020 թվականի հունվարի 1-ից կիսամյակային պարբերականությամբ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը նվազեցնել Արցախում և Հայաստանում օպերատորների կողմից մատուցվող ռոումինգի ծառայությունների սակագները:

**Արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ից`**

- էլքային զանգերի սակագները կնվազեն շուրջ 25%-ով, այնուհետև 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ նվազումը կհասնի 30%,
- մուտքային զանգերինը` շուրջ 40%-ով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ` 45%,
- տվյալների փոխանցման և ինտերնետ հասանելիության ծառայություններինը` շուրջ 50%-ով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ` 65%,
- կարճ sms հաղորդագրություններինը` շուրջ 65%-ով, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ` 75%:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով հուշագրով ձեռք բերված պայմանավորվածությունը` հանձնաժողովի որոշմամբ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում սկզբնավորված զանգերի ՀՀ շարժական և ամրակցված հեռախոսակապի օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում վերջնավորման փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարների կիրառման ժամանակացույցը, որի համաձայն` 2020 թվականի հունվարի 1-ից, յուրաքանչյուր տարի աստիճանաբար կնվազեցվի «Ղարաբաղ Տելեկոմ» ընկերության և «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» ու «Յուքոմ» ընկերությունների շարժական կապի ցանցերի, շարժական ու ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների առավելագույն վճարները` 2025 թվականի հունվարի մեկից հետո այն սահմանելով 5 դրամ/րոպե (առանց ԱԱՀ):

➤ 2019 թվականին հանձնաժողովն իրականացրել է նաև ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման մրցույթներ, որոնց արդյունքում բացի **2 500 000 000** դրամ ՀՀ պետական բյուջե կատարված մուտքից, ՀՀ բնակավայրերում մեկ տարվա ընթացքում կապահովվի շարժական կապի ցանցի 4G+/LTE-A տեխնոլոգիայի հիման վրա **առնվազն մեկ օպերատորի 100 տոկոս** և **երկու օպերատորի** փոխադարձ ներթափանցելի առնվազն **80 տոկոս ծածկույթ**, իսկ

հետագայում ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի տեսքով պետական բյուջե կփոխանցվի տարեկան լրացուցիչ **840 000 000** դրամ գումար՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի գծով տարեկան մուտքերը հասցնելով 7-8 միլիարդ:

- Տեղեկացնեմ նաև, որ 2019 թվականի ապրիլին հանձնաժողովի և «ՎԵՈՆ Արմենիա», «USU Հայաստան» փակ բաժնետիրական ու «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների միջև կնքված փոխկապակցման վճարների վերաբերյալ փոխընթեման հուշագրի համաձայն՝ 2019 թվականի հունիսի 1-ից հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի, ինչպես նաև շարժական ու ամրակցված կապի ցանցերի միջև փոխկապակցման վճարը սահմանվել է 5 դրամ/րոպե (առանց ավելացված արժեքի հարկի) գործող 7,4 դրամի փոխարեն:

Այնուհետև, հաշվի առնելով հուշագիրը և ղեկավարվելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով հանձնաժողովին վերապահված իրավասությունները Հանձնաժողովի կողմից հաստատվեց հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկան, որի արդյունքում նշված մեթոդիկայով կսահմանվեն փոխկապակցման ծառայությունների վերջնավորման նոր վճարներ, որոնք կկիրառվեն 2020 թվականի հունվարի 1-ից:

Մասնավորապես, շարժական կապի ցանցերի համար վերջնավորման վճարները հանձնաժողովի նախնական գնահատմամբ կկազմի 3,94 դրամ՝ (առանց ԱԱՀ-ի), իսկ ամրակցված ցանցերի համար՝ 0,96 դրամ (առանց ԱԱՀ-ի):

- 
- Ինչպես և ամեն տարի այս տարի ևս սպասարկման որակի բարելավման նպատակով լրամշակվել են բնական գազի, էլեկտրական էներգիայի և խմելու ջրի մատակարարման և օգտագործման կանոնները, որոնց արդյունքում՝
  - կրճատվել են 0.4 կՎ լարմամբ ոչ պարզեցված միացման և 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ կառուցվող բազմաբնակարան շենքի, կամ կառուցապատվող թաղամասի էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ 60 և 300 օրվա փոխարեն սահմանվելով համապատասխանաբար՝ 55 և 290 օր:

- մատակարարը պարտավորեցվել է իրագեկելու բաժանորդին գազամատակարարման վթարային ընդհատման և վերականգնման կանխատեսվող ժամկետի մասին,
- Չգազիֆիկացված բնակավայրերում գտնվող գազասպառման համակարգերը կամ համայնքի վարչական տարածքի սահմանից դուրս գտնվող գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միանալու ֆինանսական մատչելիության ապահովման նպատակով Կանոններից հանվել է տեխնիկական պայմանների տրամադրման համար 15 000 դրամի վճարման պահանջը,
- Երկարաձգվել է առևտրային հաշվառքի սարքերի ցուցմունքների գրանցման ժամկետը, որը հնարավորություն կտա օպտիմալացնել բնական գազի սակագնում ներառվող՝ աշխատակիցների վճարման ծախսերը.
- Ավելացվել են մատակարարի կողմից բաժանորդին վճարվող տույժերը. բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների պահանջների խախտման դեպքում բաժանորդին կվճարվի տույժ վերջինիս ծախսած բնական գազի միջին արժեքի 30 տոկոսի չափով (ներկայիս 20 տոկոսի փոխարեն), բայց ոչ ավելի քան 2500 դրամը (ներկայիս 2000) դրամի փոխարեն),
- Սահմանվել են առանձին թաղամասերի և փողոցների գազիֆիկացման կարգավորումներ, որոնցով հնարավորություն է ստեղծվել խուսափել Հայաստանի Հանրապետության տարբեր համայնքների, թաղամասերի, կամ փողոցների գազիֆիկացման նպատակով անհատական որոշումներ կայացնելուց, ինչի հետևանքով **կրճատվել են նաև գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման ժամկետները,**
- ջրամատակարար ընկերության նախաձեռնությամբ պայմանագրի լուծելուց առաջ սահմանվել է բաժանորդին նախապես ծանուցելու պահանջ, ինչպես նաև տեխնիկական պայմանների գործողության ժամկետի երկարաձգման հնարավորություն,
- նախատեսվել է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին մատակարարի տրամադրած միացման սխեմայի հիման վրա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, մատակարարի կամ այլ հեռանկարային զարգացման ծրագրերի միջոցով համակարգերի կառուցման



հնարավորություն, ինչ հանգեցնելու է դիմող անձից գանձվող նոր միացման վճարի նվազման,

- սահմանվել է ջրաչափական հաշվիչի ցուցմունքի հիման վրա միջին ամսական ծախսով գրանցման հնարավորություն, ինչպես նաև կանոնների նոր միացմանը վերաբերող դիմումին ժամկետի խախտմամբ պատասխանելու դեպքում դիմող անձին տուժանք վճարելու պահանջ.
- Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը տեղակայված հաշվիչների դեպքում հաշվիչի աշխատանքի տոկոսի շեղման դեպքում վերահաշվարկ չկատարելու պահանջի սահմանում:

---

➤ Հանձնաժողովի դիմում-բողոքների մասով.

2019 թվականի հունվարից մինչև դեկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողով է ներկայացվել գրավոր և բանավոր 1538 դիմում: Գրավոր ներկայացվել է 700 դիմում կամ ընդհանուր դիմումների թվի 45.5%-ը, իսկ բանավոր ներկայացվել է 838 դիմում կամ ընդհանուր դիմումների թվի 54.5%-ը:

Գրավոր ներկայացված 700 դիմումներից 381-ը (54.4%-ը) վերաբերել են ջրամատակարարման ոլորտին, 203-ը (29 %-ը)՝ էլեկտրամատակարարման ոլորտին, 79-ը (11.3%-ը)՝ գազամատակարարման ոլորտին, 37-ը (5.3%-ը)՝ հեռահաղորդակցության ոլորտին:

- Գրավոր ներկայացված 700 դիմումներից 124-ը բավարարվել է (17,7%),
- 117 դիմում բավարարվել է մասնակի (16,7%),
- 356 դիմումի տրվել է պարզաբանում է (59,8%),
- 32 դիմումի վարչական վարույթը կարճվել է է (4,6%),
- 15 դիմում վերադարձվել է դիմումատուին է է (2,1%),
- 7 դիմում վերահասցեագրվել է (1 %),
- 11 դիմումի տրվել է տեղեկատվություն (1,6 %)
- և 38 դիմում այս պահին դեռ քննարկման ընթացքի մեջ է:

Բանավոր ներկայացված 838 դիմումներից 392-ը (47%-ը) վերաբերել են ջրամատակարարման ոլորտին, 287-ը (34%-ը)՝ էլեկտրամատակարարման ոլորտին, 123-ը (15%-ը)՝ գազամատակարարման ոլորտին, 33-ը (4%-ը)՝ հեռահաղորդակցության ոլորտին, 3-ը (0.4%-ը)՝ ջերմամատակարարման ոլորտին: